891.710
Ա-30

Վ. ԼԵՖԵԴԵՎ

ՈՎ Է ՈՒԺԵՂԸ

ՊԵՏՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

891.71 Մ
L-30
25 SEP 2008
-6 NOV 2011

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

087.1

Վ. ԼԵԲԵԴԵՎ

ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА С.С.Р.
Инв. № 851 3

ՈՎ Է ՈՒԺԵՂԸ

Գրքի շապիկը յեվ նկարները՝ Վ. ԼԵԲԵԴԵՎԻ

ՊԵՏՀՐԱՏ 1935 ԵՐԵՎԱՆ

30.04.2013

3448

Գլխ. խմբագիր՝ Ա. ՀԱՅՐՅԱՆ
Թարգմ. Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գեհարատի տպարան, Երևան
Գլավլիտ 8715, Հրատ. 3150.
Պատվ. 1487. Տիր. 5000

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Բ. Նոտեկա
ՀՍՍՌ ԳԱ ԲԳԲ
Ա. ԻՄ. Ա. ՄԵՍՐՈՊԻ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԻՆՍՏ.

Կ 2787-63

Կար չկար մի ցուլ—մեծ և ուժեղ։ Նա այնքան ծանր եր, վոր կամուրջներով չեր անցնում, այլ ջրի միջով։ Անապատի գազանները հեռու եյին փախչում նրանից, վորովհետև ցուլն ուներ մեծ ուժ և խոշոր հասակ, իսկ յեղջյուրավոր անասունները վախենում եյին նրա բարձր ձայնից։ Նրա ձայնը անցնում եր յերեք հազար քայլ հեռավորություն։

Մի անգամ, գիշեր ժամանակ, անապատի գայլերի վոհմակը շրջապատել եր նրան։ Ցուլը կռացրեց իր գլուխը և այնպես բառաչեց, վոր գայլերը չորացած ճյուղերի նման այս ու այն կողմ ցրվեցին։

Այդ գիշեր, ցուլն իր սուր պոչով այնպես խրփեց մի գայլի, վոր գայլը ամբողջ գիշերը մնաց իր տեղում և միայն առավոտյան վեր կացավ և սուս ու փուս կորավ։

Այդ որվանից գայլերը ճանաչում եյին ցուլին և վախենում նրանից։



Գար չկար մի առյուծ—ուժեղ և արագաշարժ։ Յերբ նա մռնչում եր՝ վախկոտ քարայծերը ցած եյին ընկնում։ Քարայծերն այնքան եյին վախենում առյուծից, որ չեյին համարձակվում գնալ ջուր խմել։

Մի անգամ, գետեզրի թփուտներից դուրս թռավ մի մեծ գորշագույն գունդ։ Դա առյուծն եր։ Նա մի բոպեյում գետին տապալեց քարայծին։ Այծիկին փոքրիկ նապաստակի նման վեր բարձրացրեց նա և մի վոստյունով կորավ թփուտների մեջ։

Առյուծն իր վորսը դեռ չեր կերել վերջացրել, յերբ գայլերը յեկան, որ հավաքեն նրա ընթրիքի մնացորդները—վոսկորները։

Մի անգամ գայլերը յեկան մեծ խմբով։ Առյուծն իր տեղից դեռ վեր չեր կացել։ Նա իր



թաթն ու դունչն եր լիզում։ Ամենաքաջ գայլերից մեկը մոտ վազեց և մի վոսկոր վերցրեց։ Բայց առյուծը մի այնպիսի հարված տվեց նրան՝ իր ծանր թաթով, որ գայլը ջարդված ընկավ ավազի վրա։

Ով է ուժեղը, առյուծը, թե՝ ցուլը։ Գայլերն այս մասին վիճեցին։ Ամենից խորամանկ գայլն ասաց.

— Թող առյուծն ու ցուլը կռվեն, մենք այն ժամանակ կտեսնենք, թե ով է ավելի ուժեղը։

Մյուս գայլերն ատամներն իրար զարկեցին ու ասացին։

— Այդ լավ է, մեր մի թշնամին կպակասի։

Երկու գայլ զանազան կողմերը գնացին, մեկը ցուլին փնտռելու, մյուսը՝ առյուծին։ Նրանք ամբողջ օրը վազվզեցին։ Նրանցից մեկը գտավ ցուլին։ Կես օր էր, ցուլը կանգնած էր անտառի բացատում և ախորժակով խոտ էր ուտում, շարժելով պոչը։

Գայլը փորը գետնին քսելով գնաց դեպի նա։ Ցուլը գլուխը շարժեց։ Գայլը յետ-յետ գնաց և մտածեց այսպես. «ցուլի հետ պետք է զգույշ լինել, թե չե նա իմ փորը կթափի»։ Գայլը պոչը թափահարելով ասաց ցուլին.



— Հեռացիր, գնա անապատի մյուս կողմը։ Ճիշտ է, այնտեղ խոտ քիչ կա. բայց դու կենդանի կմնաս։ Աշխարհի ամենաուժեղը, առյուծը գալիս է այստեղ։ Եթե նա քեզ գտնի՝ կուտի։

Ցուլը պատասխանեց.

— Ես վոչ վոքից չեմ վախենում.

Ասաց ցուլը և յերեկոյան գնաց անապատի մյուս կողմը։

Կես որ եր, յերբ մյուս գայլն ել գտավ առյուծին։ Առյուծը պառկած եր ժայռի տակերում և ննջում եր։ Նա իսկույն նկատեց գայլին և մնաց անշարժ պառկած։ Գայլը դողում եր վախից։ Նա ժայռից հինգ քայլ հեռու կանգ առավ։ Գայլն այդպես յերկար կմնար կանգնած, բայց հանկարծ առյուծը բացեց իր դեղին աչքերը, հորանջեց և ապա մի վոստյունով կանգնեց գայլի մոտ։ Գայլը քիչ մնաց ուշաթափվեր։ Առյուծը հպարտ նայեց նրան և պոչը խաղացնելով հեռացավ։

Գայլը վախից լացեց և կանչեց.

— Առյուծ անապատն է գալիս քո ուժեղ թըշնամին՝ ցուլը։ Նա վոչ վոքից չի վախենում, իսկ մեզ նման ամենը կենդանիներին ել շատ նեղություն է տալիս։ Տես, թե ինչպես է պատռել կողքս։ Նա շատ ուժեղ գազան է, քարայծի պես ել խոտ է ուտում։

Առյուծը պոչով խփեց իր կողերին, վեր ցատկեց, շուռ յեկավ մեջքի վրա և պառկելով՝ դուրս հանեց ճանկերը։

Իսկ գայլը պոչը թագցրեց վոտքերի մեջ տեղում և մի կերպ հասավ իր վոհմակին։

Սկսել եր մթնել։ Փչում եր մեղմ քամին, զեփյուռը։ Մի մեծ բան շարժվում եր դեպի գետը։ Նրա վոտքի տակ ջարդվում եյին թփուտները։ Դա ցուլն եր։

Հանկարծ լսվեց մի ուժեղ մռնչյուն. այնքան ուժեղ մռնչյուն, վոր կարծես թե լեռից պոկված ժայռ է գլորվում։ Քիչ հետո մռնչացողը կորավ թըփուտների մեջ։ Դա ել առյուծն եր։



Ցուլը կանգ առավ, պատրաստ պահելով իր պոզերը։ Ամբողջ ծանրությամբ յետ քաշվեց։ Քսան քայլ հեռու նստել էր առյուծը։ Նա աչքերը ցուլից չէր հեռացնում։ Նրան թվում էր թե իր ատամների տակ պատռվում է ցուլի կաշին և ջարդվում են վոսկորները։

Մի վոտայուն և առյուծը թռչում է ցուլի մեջքին։ Ցուլը ծառս է լինում յետին վոտների վրա, շարժում է գլուխը, վոր պոզերով խփի առյուծին։ Ահա ցուլը մի անգամ ել թափահարեց գլուխը, մեկ ել, մեկ ել և առյուծն արդեն կնկնի։ Առյուծն արդեն սկսում է փաթաթվել ցուլի բաշին մի թաթով և ատամներով կծում, աշխատելով գետին գցել նրան—ցուլին։ Բայց ահա ցուլն իր լայն ճակատով հարվածում է առյուծին և վերև շպրտում, վորը պտտվելով ոդի մեջ, ընկնում է ցուլի պոզերի վրա։ Առյուծը ցավից ու բարկությունից մռնչում է. պոզերը նրան շատ խորը ծակոտել են։ Ցուլը հերոսի նման շարժում է գլուխը, առյուծին նորից խփում և վերջապես, մի ուժեղ հարվածով փռում ավազի վրա։

Առյուծի կողքը պատռվում է. թաթերն արյունոտվում են։ Նա սեղմվում է գետնին, կծկվում և նորից հարձակվում ցուլի վրա։

Ցուլն ել է առաջ գալիս։ Նա ցանկանում է իր ծանրությամբ գետին գցել առյուծին, դնել նրան պոզերի վրա և շպրտել վերև։

Առյուծին հաջողվում է բռնել ցուլի կոկորդից։ Ցուլն ազատում է իր կոկորդը, կանգնում է յետին վոտների վրա, վոր իր ծանրությամբ փշրի

առյուծին։ Բայց առյուծը դուրս է թռչում նրա տակից և ցուլը թափով ընկնում է ծնկների վրա։

Կատաղած առյուծը վոռնալով ցուլի վրա յե հարձակվում, թաթերով շուռ է տալիս ցուլի գլ-

լուխը և ատամները խորը խրում նրա կոկորդը։ Ցուլը վերջին անգամ կանգնում է ու գլորվում կողքի վրա։

— Ցուլն սպանված է։— Առյուծն ուժեղ է ցուլից,— վոռնում են գայլերը։

Հոգնած առյուծը վերադառնում էր գիշերային վորսից։ Նա արդեն մոտենում էր ժայռին։ Հանկարծ ինչ վոր բան սուլեց ոդի մեջ և մեխվեց, նրա կողը, ձախ ուսի տակ։

Առյուծը մի վոստյուն գործեց և ծանրությամբ ցած ընկավ։

Իսկ ժայռի վրա կանգնած էր նա, վորն ավելի ուժեղ էր։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՌ ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

TÜRKMENISTAN
DÖVLET
KITAPHANASY

ՀՀ Ազգային գրադարան
NL0383651

3448